ՈՒՂԱՐԿՈՂ ԱՍՏՎԱԾԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 17

*Հովհաննեսի Ավետարանի ամենակարևոր թեմաներից մեկը **«ուղարկելն»** է: Հատկապես **Հովհաննես 13–17 գլուխներում** Հիսուսը բազմիցս նկարագրում է Իրեն որպես **Հոր կողմից ուղարկվածը**: Այդ գլուխներում «ուղարկել / ուղարկեց» բառերը հիշատակվում է **14 անգամ**:*

Հունարենում հիմնականում օգտագործվում են երկու բայ (verb).

- ***πέμπω (pempō)*** *– ուղարկել*
- ***ἀποστέλλω (apostellō)*** *– ուղարկել հանձնարարությամբ, առաքելությամբ*

Սա բացահայտում է մի խոր ճշմարտություն Աստծո մասին.

Աստվածը ուղարկող Աստված է:

Հիսուսը դարձյալ ասաց նրանց. Խաղաղությո՛ւն ձեզ. ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ Ես եմ ձեզ ուղարկում: Այս ասելուց հետո նրանց վրա փչեց ու ասաց. Առե՛ք Սուրբ Հոգին (Հով. 20.21-22)

Հայրը ուղարկեց Որդուն:

Որդին ուղարկում է Իր աշակերտներին:

Սուրբ Հոգին օծում է և զորացնում ուղարկվածին:

1. ՋԱՏԻԿԸ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ Է

«Որովհետև Աստված այնքան սիրեց աշխարհը, որ տվեց Իր միածին Որդուն...» Հովհ. 3.16

- ***Ավետարանը սկսվում է ուղարկելուց: (apostellō)***

  Աստված պարզապես խղճահարություն չզգաց աշխարհի հանդեպ. Նա ուղարկեց Իր Որդուն աշխարհ:

  Հայրը, որ ուղարկեց Ինձ… (Հովհ. 14.24)

  Ես գնում եմ Նրա մոտ, ով ուղարկեց Ինձ... (Հովհ. 16.5)

  Այս երկու խոսքերի միջև ձևավորվում է քո կյանքը, քո կոչումը և քո նպատակը:

  Այսօր շատ մարդիկ գիտեն, թե ուր են գնում կյանքում, բայց քչերն են հասկանում, թե ինչու են այստեղ և որն է իրենց կյանքի նպատակը:

  Ո՞րն էր Հիսուսի կյանքի նպատակը:

  որովհետև Մարդու Որդին եկել է կորածին փնտրելու ու փրկելու (Ղուկաս19.10)

  Աստված չուղարկեց Իր Որդուն աշխարհ, որ աշխարհը դատապարտի, այլ որպեսզի աշխարհը Նրա միջոցով փրկվի (Հովհ. 3.17)

Հիշեք՝ դուք ուղարկված եք, և Աստված նպատակ ունի ձեր կյանքի համար:

2. ՈՒՂԱՐԿՎԱԾ ՈՐԴՈՒ ԱՂՈԹՔԸ

«Հովհաննես 17-ը ներկայացնում է Հիսուսի Քահանայական աղոթքը մեզ համար»:

*Սա է հավիտենական կյանքը, որ **ճանաչեն Քեզ՝** միակ ճշմարիտ Աստծուն, և Հիսուս Քրիստոսին, որին Դու ուղարկեցիր (Հով. 17.3)*

Նրանք հավատացին, որ Դու ուղարկեցիր Ինձ (Հով. 17.8)

*Որպեսզի աշխարհը **հավատա**, որ Դու ուղարկեցիր Ինձ (Հովհ. 17.21):*

*Որպեսզի աշխարհը **ճանաչի**, որ Դու ուղարկեցիր Ինձ: (Հովհ. 17.23)*

Ինչպես Դու ուղարկեցիր Ինձ աշխարհ, այնպես էլ Ես ուղարկեցի նրանց աշխարհ... (Հովհ. 17.18)

- ***Այսինքն՝ հավատը սկսվում է այն ժամանակ, երբ մարդը ճանաչում է ուղարկվածին:***
- *Բայց հարց է առաջանում. ինչպե՞ս մարդիկ կհավատան, եթե չլսեն ուղարկվածի մասին:*

*Հռոմե. 10.14 – Արդ ինչպե՞ս կկանչեն նրան, ում չհավատացին, կամ ինչպե՞ս կհավատան նրան, ում մասին չլսեցին, կամ ինչպե՞ս կլսեն առանց քարոզչի: **15** Եվ ինչպե՞ս կքարոզեն, **եթե չուղարկվեն**:*

3. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԶՈՐԱՑՆՈՒՄ Է ՈՒՂԱՐԿՎԱԾ ԵԿԵՂԵՑՈՒՆ

Նույն Վերնատան խոսքում Հիսուսը խոստանում է Սուրբ Հոգու մասին:

*Մխիթարիչը՝ **Սուրբ Հոգին**, որին Հայրը կուղարկի Իմ անունով (Հովհ. 14.26)*

Մխիթարիչը, որին Ես կուղարկեմ ձեզ Հորից... (Հովհ. 15.26)

Եթե գնամ, կուղարկեմ Նրան ձեզ մոտ... (Հովհ. 16.7)

Հայրը ուղարկեց Սուրբ Հոգուն, որպեսզի Նա զորացնի, ուսուցանի և մխիթարի աշխարհ ուղարկված Եկեղեցուն:

4. ԱՆՏԻՈՔԸ ԴԱՐՁԱՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՈՒՂԱՐԿՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ:

*Գործք 13 – **2** Երբ նրանք Տիրոջը պաշտամունք էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. Առանձնացրե՛ք ինձ համար Բառնաբասին ու Սողոսին այն գործի համար, որին ես կանչել եմ նրանց:*

4 Նրանք, Սուրբ Հոգուց ուղարկված, իջան...

Գործք 14.27 Երբ նրանք եկան և հավաքեցին եկեղեցին, պատմեցին, թե Աստված իրենց հետ ինչե՛ր արեց և որ հեթանոսների համար հավատի դուռը բացեց:

- *Երուսաղեմը եկեղեցու ծննդավայրն էր, իսկ Անտիոքը դարձավ միսիայի կենտրոնը:*

  Այստեղից Ավետարանը սկսեց տարածվել ամբողջ Հռոմեական աշխարհում:

  <u>ինչպե՞ս</u> կկանչեն Նրան,

  <u>ինչպե՞ս</u> կհավատան Նրան

  <u>ինչպե՞ս</u> կլսեն Նրան

  <u>ինչպե՞ս</u> կքարոզեն, եթե <u>չուղարկվեն</u>:

  Եվ այս ամենը տեղի ունեցավ, որովհետև մի եկեղեցի հասկացավ մի կարևոր ճշմարտություն.

  Ինչպես Հայրն ուղարկեց Ինձ, այնպես էլ Ես եմ ձեզ ուղարկում (Հովհ. 20.21)

  Եկեղեցին այն ժողովուրդն է, որ ուղարկված է:

5. ՄԻՍԻԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԱՅՍՕՐ

- *Դուք ուղարկված եք ինչ-որ տեղ:*

  աշխատանք, դպրոց, միսիա...

- *Հարցը սա է. «Արդյո՞ք մենք կասենք՝ այո»:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ